# Համաժողովի նորություններ

## Այժմ և այն ժամանակ

**1932 թվական**

Տեսեք, թե որքան է եկեղեցին աճել Նախագահ Օուքսի ծնվելուց հետո:


1939 թվական

**2024 թվական**


2024 թվական

**7** տաճարներ

**189** նվիրագործված տաճարներ

**146** պլանավորման և շինարարական փուլում գտնվող տաճարներ

**700000** եկեղեցու անդամներ

**17000000** եկեղեցու անդամներ 170 երկրներում



«Աստծո հետ կապված յուրաքանչյուր ուխտ հնարավորություն է` ավելի շատ մոտենալու Նրան»:

**Նախագահ Հենրի Բ. Այրինգ` Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական**



«Ես վկայում եմ, որ Աստված լսում է մեր բոլոր աղոթքները»:

**Նախագահ Ջեֆրի Ռ. Հոլլանդ` Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահ**



«Դուք [Աստծո] զավակն եք: Նա ճանաչում է ձեզ: Նա կամենում է օրհնել ձեզ»:

**Նախագահ Սյուզան Հ. Փորթեր, Երեխաների միության գերագույն նախագահ**



## Համաժողովը դիտում են ողջ աշխարհում



Ինձ դուր եկավ երեց Դե Ֆեոյի ելույթը: Նա ասաց, որ մենք կարող ենք տեսնել Հիսուսին մեր հոգևոր աչքերով, եթե պահպանենք մեր հավատքը: Այդ ժամանակ մենք խաղաղություն կզգանք և Նրա Հոգին մեզ հետ կլինի:

**Թոմաս Մ., 7 տարեկան, Կատալոնիա (Իսպանիա)**



Համաժողովն ինձ համար առանձնահատուկ է, քանի որ ժամանակ եմ անցկացնում ընտանիքիս հետ: Մենք լսում ենք խոսնակներին և կատարում ձեռագործ աշխատանքներ:

**Լյուսի Ա., 10 տարեկան, Ալ-Ահմադի (Քուվեյթ)**



Իմ ընտանիքը աղոթում է Երկնային Հորը, որ օգնի մեզ պատրաստվել համաժողովին և ուսուցանվել Հոգու կողմից: Մենք հագնում ենք մեր կիրակնօրյա հագուստը: Մենք միասին դիտում ենք համաժողովը և երգչախմբի հետ երգում ենք բոլոր երգերը:

**Հարիեթ Օ., 9 տարեկան, Լագոս նահանգ (Նիգերիա)**

## Նոր տաճարներ




Նախագահ Նելսոնը գերագույն համաժողովում հայտարարեց 15 նոր տաճարների մասին: Միացրեք 15 կետերը` նկարն ավարտելու համար:

1. Ուտուրոա (Ֆրանսիական Պոլինեզիա)
2. Չիուահուա (Մեքսիկա)
3. Ֆլորիանոպոլիս (Բրազիլիա)
4. Ռոսարիո (Արգենտինա)
5. Էդինբուրգ (Շոտլանդիա)
6. Բրիսբեն (Ավստրալիայի հարավային շրջան)
7. Վանկուվեր (Բրիտանական Կոլումբիա)
8. Յումա (Արիզոնա)
9. Հյուսթոն (Տեխասի հարավային շրջան)
10. Դես Մոինես (Այովա)
11. Ցինցինատի (Օհայո)
12. Հոնոլուլու, (Հավայան կղզիներ)
13. Վեսթ Ջորդան (Յուտա)
14. Լիհայ (Յուտա)
15. Մարակայբո (Վենեսուելա)